

# ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ


AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 76ԴՂ ՏԱՐԻ, ԹԻԻ 210 (21552) ՈՒՐԲԱԹ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

ԻՄՐԱՅԼԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՐԳԻԼԵՆ ԵՐԿՈՒ ԴԱՂԵՍՏԻՆՅԻ ԵՐԵՒԱՆԵՐՈՒ ՄԵԿՆՈՒՄԸ ՅԱՅԱՍՏԱՆ

«Էյ. Փի.» լրատու գործակալությունը հաղորդեց, թե իսրայելեան իշխանությունները արգիլած են պաղեստինցի երկրորդ երեխաներու մեկնումը Երեւան, ուր անոնք պիտի ենթարկուէին վիրաբուժական գործողութեան: Ռատուան Հմայէտ (երկու տարեկան) եւ Մուսլէ Ռատուան (6 տարեկան), երկուքն ալ կապալին, իրենց բժշկներուն ուղեկցութեամբ Նոյեմբեր 4ին փորձած են Գահիրէ մեկնիլ, անկէ երեւան ուղղուելու համար: Սակայն իսրայելեան իշխանութիւնները երեխաներու բժշկին՝ Ռաֆտ Սապպահի չեն արտօնած մեկնիլ, հետեւաբար ամբողջ խումբը մնացած է Պաղեստին: Պաղեստինի մանուկներու օժանդակութեան հիմնադրամի պատասխանատուներէն Մուսլէյ Յայաթէյ յայտարարեց, թէ այժմ երկու երեխաներուն կեանքը վտանգուած է: Հիմնադրամի պատասխանատուներ հաղորդակցութեան մէջ են միջազգային վանապան կազմակերպութիւններու հետ՝ սպասուելու համար երկու երեխաներու Երեւան մեկնումը:

## ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ԸՆԹԱՑԻԿ ՆԻՍՏԸ



Կառավարութիւնը երէկ առաւօտեան ժամը 10:00ին Թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ գումարեց իր հերթական նիստը, նախագահութեամբ նախագահ Կօր. Էմիլ Լախուտի եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Ժողովէն բացակայեցան նախարարներ Ֆարէս Պուէյյ, Սլէյման Ֆրենտի, Խալիլ Հըրաուի, Ղապի Արիտի, Թալալ Արսլան եւ Ալի Հիւսէյն Ապտալա: Նիստին ընթացքին նախագահ Լախուտ վերահաստատեց իր խիստ դատապարտումը Ռիատի մէջ տեղի ունեցած պայթումին, որուն Կոհ գացած էին նաեւ իրանացի քաղաքացիներ. ան ցաւակցութիւն յայտնեց Կոհուած իրանացիներու ընտանեկան պարագաներուն եւ թելադրեց, որ վիրատի, Թալալ Արսլան եւ Ալի Հիւսէյն Ապտալա: Նիստին ընթացքին նախագահ Լախուտ վերահաստատեց իր խիստ դատապարտումը Ռիատի մէջ տեղի ունեցած պայթումին, որուն Կոհ գացած էին նաեւ իրանացի քաղաքացիներ. ան ցաւակցութիւն յայտնեց Կոհուած իրանացիներու ընտանեկան պարագաներուն եւ թելադրեց, որ վիրատի, Թալալ Արսլան եւ Ալի Հիւսէյն Ապտալա:

## ՍՈՒՐԻԱ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՈՒԱՇԻՆԿԱԹԸՆԻ ՅԵՏ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱՐԱՐ ՀԱՍԱՆ ԴԱՄԱՍԿՈՍ, 13 (ԱՖՓ).- Սուրիա պիտի շարունակէ երկխօսութիւնը Միացեալ Նահանգներուն հետ, հակառակ անոր որ ամերիկեան խորհրդարանը վաւերացուցած է Դամասկոսի դէմ պատժամիջոցներու հաստատումը, յայտնեց տեղեկատուութեան նախարար Ահմէտ Հասան: Հասան ըսաւ, որ Սուրիա դուրս պիտի չփակէ ամերիկեան կառավարութեան հետ երկխօսութեան, նոյնիսկ եթէ յիշեալ վարչակարգին արմատականները կ'ուզեն անարդարացուցիչ կերպով թափ տալ յարուածութեան: Ան աւելցուց, որ Սուրիայ դէմ սպառնալիքները նորութիւն չեն, սակայն վերջերս թափ ստացած են: Հասան ամբաստանեց Ուաշինկթընը, դիտել տալով որ անհկա կ'ուզէ իր պղծութիւնը տարածել՝ փոխարինելու համար ՄԱԿը: Սպառնա- Ծարը՝ Էջ 9

## ՖՐԱՆՍԱ, ԻՐԱՔԻ ՄԷՋ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ԿՈՉ Կ ՈՒՂՂԷ



Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմիսթը Տր Վիլ-

փէն յայտարարեց, որ ժամանակը հասած է, որ Միացեալ Նահանգներ վերատեսութեան ենթարկեն Իրաքի հանդէպ որդեգրուած քաղաքականութիւնը՝ ամէնէն արագ ժամանակամիջոցին իշխանութիւնը իրաքցիներուն յանձնելու համար: Տր Վիլփէն ըսաւ, որ միջազգային ընտանիքը աւելի երկար չի կրնար սպասել: Ան աւելցուց, որ ամերիկացի կարգ մը պաշտօնատարներ տակաւին կը կրկնեն յայտնեալ ժամանակի անհրաժեշտութեան յանկերգը: Տր Վիլփէն դիտել տուաւ, որ յայտնեալ ժամանակ կը նշանակէ, որ աւելի մեծ թիւով զոհեր պիտի իյնան: Ֆրանսացի նախարարը աւելցուց, որ մինչեւ այս տարուան վերջ տարուած իրաքցիներու ներկայացուցչական խորհուրդ մը պէտք է յառաջացուի եւ ոչ թէ՛ 2004ի աւարտին, ինչպէս կ'առաջարկեն կարգ մը նախատեսութիւնները:

## Հ. Յ. Դ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՄԱՆՆԱԿՅԵՑԱԻ ՔԱՆԹԱՐԻ ԶՕՐԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՔԻՆ

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը երէկ մասնակցեցաւ իսրայելեան բանտերուն մէջ 24 տարիէ ի վեր բանտարկուած Սամիր Քանթարի Կօրակցութեան հաւաքին, որ կայացաւ կէսօրուան ժամը 1:30ին, լրագրողներու սենտիքայի կեդրոնին մէջ: Հաւաքին ներկայ եղան երեսփոխաններ, պետական եւ կուսակցական անձնաւորութիւններ, ինչպէս նաեւ Քանթարի ծնողներն ու նախկին բանտարկեալներ:

**Հ.Յ.Դ. ԶԱՒԱՐԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄՈՒԹԻՒՆ**  
**ՄԻՍՈՆ ԶԱՒԱՐԵԱՆԻ ՄԱՅՈՒՄԱՆ 90ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ**  
Մասնակցութեամբ՝ Հ.Յ.Դ. «ԶԱՒԱՐԵԱՆ» ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄՈՒԹԵԱՆ  
Բանախօս՝ ԸՆԿ. ԿԱՐՕ ՅՈԿՅԱՆՆԵՍԵԱՆ  
• Գեղարուեստական յայտագիր • Տեսաերիզի ցուցադրութիւն  
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 14 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ից, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

**Հ. Յ. Դ. ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ** **Հ. Յ. Դ. ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**  
**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑ**  
Խորհրդարանի նախկին նախագահ՝  
երեսփոխան ԸԻՄԵՅՆ ԸԻՄԵՅՆԻԻ հետ  
Նիւթ՝ ԹԱՅԷՖԻ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐԸ  
Տեղի կ'ունենայ Գործըջաբքի, 19 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:30ից, Յակոբ Տէր Մելքոնեան սրահին մէջ:  
(Ա.Ֆ.Փ)

## ՌՈՒՍԱԿԱՆ ՕԳՈՒԺԻ «ՄԻԿ-29» ՕԳԱՆԱԻՆ ԲԵԿՈՐՆԵՐՆ ՈՒ ՕԳԱՉՈՒԻՆ ԴԻԱԿԸ ԳՏՆՈՒԱԾ ԵՆ ԳԻՒՄՐԻԻ ՄՕՏԵՐԸ

Գիւմրիէն 15-16 քմ. հիւսիսարեւելք գտնուող Ջաջուռ գիւղին մօտ երէկ գտնուեցան բեկորները ռուսական օդուծի «Միկ-29» օդանաւին, որ նախանցեալ օր Շիրակի շրջանին մէջ «անհետացած» էր: Նոյն վայրին մէջ յատուկ խմբակներ յայտնաբերեցին նաեւ «Միկ-29»ի օդանաւին՝ 39ամեայ Կոնստանդին Կարտաշի դիակը: Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան մամլոյ առույթի մը ընթացքին երէկ յայտարարեց, թէ «Միկ-29»ի շախմատան պատճառը օդերկուսարանական վատ պայմաններն են, որուն հետեւանքով շատ հաւանաբար օդանաւը բախած է 2557 մէթր բարձրութեամբ լեռան մը: Նախանցեալ գիշեր Հայաստան ժամանած էին Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութեան խմբակներ՝ հետախույզելու համար արկածին պատճառները: Նախարար Սարգսեան դիտել տուաւ, որ մասնագիտական խումբերու աշխատանքին ետք միայն կարելի է վերջնական պատասխան տալ օդանաւին շախմատան պատճառներուն մասին: Այսօր Հայաստան պիտի հասնի ռուսական օդուծի մասնագէտներու խմբակ մը, յատուկ սարքերով, տեղեկութիւններ քաղելու համար շախմատած օդանաւին «սեւ սնտուկ»էն, որ գտնուած է:

## ՆԱԽԱՐԱՐ ՍԵՐՇ ՍԱՐԳՍԵԱՆ ԿԸ ՀԵՐՔԷ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՍԵՐԳԷՅ ԻՎԱՆՈՎ - ԱՍԼԱՆ ԱՊԱՇԻԾԷ ՀԱՆԴԻՊՈՒՄԻ ՄԸ ԿԱՅԱՑՈՒՍԸ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան երէկ հերքեց այն տարածանքները, թէ Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով Հայաստան կատարած իր վերջին այցելութեան ընթացքին (11 Նոյեմբեր) հանդիպում ունեցած է Վրաստանի Անառիոյ Ինքնավար Հանրապետութեան ղեկավար Ալյան Ապաշիծէի հետ, որ նոյն միջոցին կը գտնուէր Երեւան: «Եթէ այդպիսի հանդիպում մը կայացած ըլլար, ապա մենք չէինք հերքեր անհկա», յայտնեց Սերժ Սարգսեան:

## ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ ԱՅՍՕՐ ՊԵՐԼԻՆԷՆ ԿԸ ՀԱՍՆԻ ՄՈՍԿՈՒԱ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան այսօր Պերլինէն կը հասնի Մոսկուա՝ աշխատանքային այցելութեան մը համար, որուն ծիրէն ներս հանդիպումներ պիտի ունենայ իր ռուս պաշտօնակիցին՝ Իլյո Իվանովի հետ: Բանակցութիւններուն առանցքը պիտի կազմեն հայեւոս յարաբերութիւններու վարգաքման հեռանկարները: Օսկանեան պիտի տեսակցի նաեւ Ռուսիոյ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Վլատիմիր Ռուչայլոյի հետ: Նախքան Ռուսիա ժամանումը, նախարար Օսկանեան պաշտօնական եռօրեայ այցելութեամբ մը կը գտնուէր Գերմանիա: Նոյեմբեր 12ին նախարար Օսկանեան հանդիպում ունեցաւ Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Նոշթա Ֆիշլըրի հետ: Կողմերը գոհունակութիւն յայտնեցին երկու երկիրներու միջեւ յարաբերութիւններու վարգաքման համար: Ֆիշլըր հաստատած է, թէ Հայաստան կը նկատուի Հարաւային Կովկասի մէջ Գերմանիոյ վստահելի գործընկերը: Օսկանեան եւ Ֆիշլըր անդրադարձած են Հայաստան - Թուրքիա յարաբերութիւններուն եւ հայ-թրքական սահմանի բացման առնչուող հարցերու: Օսկանեան ներկայացուցած է Հայաստանի տնտեսական իրավիճակը եւ հաստատած է վարգաքման թափը պահպանելու Հայաստանի կառավարութեան վճռակամութիւնը: Ան ներկայացուցած է նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման հեռանկարները: Նոյն օրը, նախարար Օսկանեան ելոյթ ունեցած է «Հարաւային Կովկաս. քաղաքական մարտահրաւերներ եւ վարգաքման հեռանկարներ» խորհրդածողովին ընթացքին, ուր յայտարարած է, թէ «Ղարաբաղ երբէք Ազրպէյճանի մաս չէ կազմած, ո՛չ պատմական, ո՛չ ալ իրաւական առումով»: Նոյն խորհրդածողովին, Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիեւ յայտնած է, թէ Լեռնային Ղարաբաղի տագնապը պիտի լուծուի փոլ առ փոլ. նախ պիտի «սպառազրուի գրաւեալ տարածքները», ապա պիտի որոշուի Ղարաբաղի կարգավիճակը...

# ԱՄՍՏՐԱԼԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ՝ ՊԸՐՐԻԻ ԵՒ ՕՊԷՅՏԻ ՄՕՏ

Աստրալիական խորհրդարանական պատուիրակությունը երկայնցելուց խորհրդարան է տեսակցեցուցավ խորհրդարանի նախագահ Նեպիի Պրերիի հետ:

Պատուիրակությունը կը գլխավորէր ծերակուտական Սանտի Մըքտանըլտ, որ շեշտեց, թէ Աստրալիա միշտ ալ կ'օժանդակէ Միջին Արեւելքի տագնապին՝ ապահովելու արդար եւ ամբողջական խաղաղութիւն, որ միակ լուծումն է:

Անդրադառնալով Սուրիան հաշուետուութեան կանչելու ամերիկեան Քոնկրէսին որոշումին, Մըքտանըլտ ըստ, որ տակաւին մինչեւ օրս յստակ չէ, թէ Աստրալիա պիտի պօրակցի՝ նշեալ օրինագիծին, թէ պիտի անտեսէ պայն, նկատել տալով, որ Միացեալ Նահանգներն Աստրալիա երկու տարբեր երկիրներ են:

Մըքտանըլտ մամուլը պատուիրակութիւնը ընթացքին նշեց, որ պատուիրակութիւնը Լիբանան

ծամանած է պաշտօնական չորսօրեայ այցելութեամբ: Ան ըստ նաեւ, որ պատուիրակութիւնը հանդիպումը պիտի ունենայ նաեւ ՄԱԿի աստրալիական ջոկատի սպաներուն հետ եւ ամէն ջանք ի գործ պիտի դնէ ամրապնդելու համար Լիբանանի եւ Աստրալիոյ միջեւ երկկողմանի յարաբերութիւնները:

Մըքտանըլտ յայտնեց, որ Պրերիի փոխանցած է Աստրալիա այցելութեան հրաւեր մը՝ աստրալիացի իր պաշտօնակիցին եւ ՕԷրակոյտի նախագահին կողմէ:

Պատուիրակությունը այցելեց նաեւ Պուսթրոս պալատ եւ տեսակցեցուցավ նախարար Ժան Օպէլտի հետ: Մըքտանըլտ լուրջ քննարկումի առարկայ դարձուց շրջանային իրադարձութիւնները եւ անոր լուծման հեռանկարները:

Իսրայէլի պաշտպանութեան նախարարին կողմէ Լիբանանի եւ Սուրիոյ դէմ ուղղուած սպառնալիքներու ալիքին շուրջ Աստրալիոյ կեցուածքները պատասխանելով, Մըքտանըլտ ըստ, որ Աստրալիա միշտ պօրակցի խաղաղութեան գործը եւ զոր-ծադրութեան:

# ԺՈՍՊԼԱԹ ՏԵՍԱԿՑԵՑԱԲ ԸՂՁՊԱԼԼԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒՆ ԸՏՏ

Ընկերվար Յառաջդիմական կուսակցութեան ղեկավար երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթ, ընկերակցութեամբ իր փոխանորդին՝ Տորէյտ

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

• **ԸՂՁՊԱԼԼԱՅԻ** ընդհանուր քարտուղար Հասան Նասրալլա երկէ կողմանորեց Ռամատանի առիթով կայացած իջթար մը, որուն ընթացքին կատարեց պաշտօնական յայտարարութիւններ՝ Իսրայէլ - Հրկայլա գերիներու փոխանակման բանակցութիւններուն մասին: Ան ըստ, որ տարիներու բանակցութիւններէ ետք Իսրայէլի հրաժարած է իր խոստացած պայմանները յարգելէ, որոնց կենդանի օրինակն է իսրայէլացի գերի Սամիր Քանթարիի ազատ արձակման վրայ: Նասրալլա շեշտեց, որ Հրկայլա երբէք պիտի չտոկարացնէ իր դիմադրութիւնը եւ ամէն ջանք ի գործ պիտի դնէ հասնելու համար իր նպատակներուն:

Նիստի ասարտին հրապարակուեցաւ պաշտօնական հաղորդագրութիւն մը, որուն մէջ անդրադառնալով էլեւմուտքի նախարար Տուաթ Սիւրաբի եւ նախկին նախարար Ծահէ Պարսունեանի դատաւարութեան թղթածրարի վերաբարձման, պահանջուեցաւ խորհրդարանի լիագումար նիստ մը գումարել քննարկելու համար ընդհանուր դատախաչութեան կողմէ նշեալ թղթածրար խորհրդարանին փոխանցելու օրինականութեան հարցը:

• **ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ** նախարար Պահիթ Թապարա երկէ պատուիրակութեան մը ղեկավարութեամբ մեկնեցաւ Դամասկոս, ուր հանդիպում մը ունեցաւ Սուրիոյ վարչապետ Մոհամէտ Նաժի Օթարիի հետ: Հանդիպումին քննարկումի առարկայ դարձան երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող դատական ատեաններու գործունէութեան ծիրէն ներս կնքուած գործակցութեան համաձայնագիրներու գործարարութիւնը: Թապարա հանդիպում մը ունեցաւ նաեւ սուրիացի իր պաշտօնակիցին՝ Նիսար Օսիլի հետ եւ ստորագրեց իրաւաբանական ուսման մարտի վերաբերեալ գործակցութեան համաձայնագիր մը: Թապարա ընդգծեց, որ առանց դատական իշխանութեան պատուութեան չի կրնար օրէնքի պետութիւն գոյանալ:

• **ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԻ** Ազգային ձկատ կուսակցութիւնը երկէ իր ընթացիկ նիստը գումարեց երեսփոխան Պուսթրոս Հարպի բնակարանին մէջ, ուր ներկայ գտնուեցան նախկին վարչապետներ Սելիմ Հըս եւ Օմար Քարամէ, խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի եւ երեսփոխան Նալլա Մուաուա: ձկատը դատապարտեց Մուաուան Արաբիոյ մայրաքաղաք Բիւտի մէջ անցեալ շաբաթավերջին տեղի ունեցած պայքարները, որ պատճառեց բազմաթիւ կոտորածներ:

Եադիի, այցելութիւններ տուաւ Հրկայլայի ընդհանուր քարտուղար Հասան Նասրալլայի եւ Հրկայլայի հոգեւոր պետ Մոհամէտ Հիւսէյն Ֆատլալայի:

Ֆատլալայի հետ ժոմպլաթ արծարծեց ներլիբանանեան հարցեր, յատկապէս փոստութեան առնչուած շրջանը յուլոյ իրադարձութիւններ, որոնց շարքին՝ Իսրայի եւ Պաղեստինի մէջ արձանագրուած պարզացումները, ինչպէս նաեւ Լիբանանի եւ Սուրիոյ դէմ ուղղուած խրայէլեան սպառնալիքները:

Հանդիպումէն ետք ժոմպլաթ հետպահեց կը սաստկանան, սակայն հարկ է պաշտպանել դիմադրութիւնն ու անոր ուժը: «Մեզի համար անհրաժեշտ է ամրապնդել ազգային կեցուածքը եւ պօրացնել ազգային գործունէութեան կեդրոնը»:

Միւս կողմէ, ժոմպլաթ Նասրալլայի հետ քննարկումի առարկայ դարձուց հիմնականօրէն Իսրայէլի հետ գերիներու փոխանակման հարցը:

Նասրալլա հաւաստեց, որ Հրկայլա ոչ մէկ ձեռն կ'ընդունի իրանացի բանտարկեալ Սամիր Քանթարիի վերաբարձելու խրայէլեան պետութեան կողմէ յայտարարուած վերջին որոշումներուն համաձայն:

Հանդիպումին քննարկուեցաւ նաեւ էլեւմուտքի նախարար Տուաթ Սիւրաբի եւ նախկին նախարար Ծահէ Պարսունեանի թղթածրարները վերաբարձելու խնդիրը:

Իր խօսքի ասարտին ժոմպլաթ անդրադառնալով այս թղթածրարին յայտնեց, որ պատահած «ժանր կատակ» մըն է, որուն լուծում մը պէտք է գտնէ «մաքուր» դատախաչութիւնը:

## ՄԱՀԱԶԴ

Սասնոյ շարքեակցական Միութեան վարչութիւնը կը գուժէ իր հիմնադիր եւ երկար տարիներու վաստակաշատ վարչական անդամներէն՝

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏՕՆԻԿԵԱՆԻ**  
մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 11 Նոյեմբեր 2003ին:

## ՄԱՀԱԶԴ

Տիկին Էլպիս Տոնիկեան  
Տէր եւ տիկին Մկրտիչ եւ Եսթեր Տոնիկեան եւ զաւակները՝ Յովհաննէս եւ Մանուսար Տէր եւ տիկին Գէորգ եւ Էօփէ Տոնիկեան եւ զաւակը՝ Յովհաննէս

Տէր եւ տիկին Յակոբ եւ Անի Լոշխանեան եւ զաւակները՝ Յօսիկ, Շանթ, Ալին, Գէորգ-Յովիկ

Տէր եւ տիկին Սարգիս Տոնիկեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Վարդգէս Տոնապետեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Ալեքսան Ասէյան եւ զաւակունք

Տիկին Արմենուհի Փափագեան եւ զաւակունք  
Տիկին Արշալոյս Գոնտալեան եւ զուստորը  
Տոնոյեան, Պապեան ընտանիքներ

Տեմիրճեան, Լոշխանեան ընտանիքներ  
Վարդանեան, Տրէփեան ընտանիքներ  
Մինասեան, Գըլընճեան ընտանիքներ  
Մանուկեան, Մահակեան ընտանիքներ  
Արայանեան, Մուրատեան ընտանիքներ

Սիմոնեան ընտանիք  
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր, քեռայրին եւ Հարազատին՝

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏՕՆԻԿԵԱՆԻ**  
(Ծնեալ՝ 1929ին)

մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 11 Նոյեմբեր 2003ին, կէսօրէ առաջ ժամը 11:45ին իր բնակարանին մէջ:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 14 Նոյեմբեր 2003ին, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

• Ներկայս ընդունիլ իրրեւ մահագգ:  
• Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Նահր Էլ Մօթ, «Միփան» շէնք, Յրդ յարկ, Շաբաթ 15 եւ Կիրակի 16 Նոյեմբերին:

## ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Երեսփոխան Ժան Օղասապեան եւ զաւակունք  
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց անբրոջ, հօր եւ Հարազատին՝

**ՊԱՏԻՆ ԺԱԼՈՒԷԼԻ**

մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 11 Նոյեմբեր 2003ին:

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 12 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:30ին, Մար Եուհաննա Եկեղեցւոյ մէջ, Չորթա:

• Ներկայս ընդունիլ իրրեւ մահագգ:  
• Ցաւակցութիւնները կ'ընդունուին երեսփոխան Ժան Օղասապեանի բնակարանը՝ Գըրեթ Ծահուան, Պալատ, Կիրակի 16 Նոյեմբեր, ժամը 10:00էն 22:00:

## ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Սիրվարդ Պոյաճեանի մահուան առիթով փոխան ծառայակցակի, Համագայինի Լիբանանի Ընթացիկ Վարչութեան ընկերներ՝ 200,000 Լ. Մ. Համագայինի «Լ. Շանթ» մշակութային կեդրոնին:

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1904ին, Հ. Յ. Գ. երրորդութեան՝ Սիմոն Չաւարեանի Լիբանան այցելութեամբ սաղմնաւորուեցաւ Լիբանանի Դաշնակցական մեծ ընտանիքը՝ հիմնադրումով ուսանողական միութեան մը, որ հետագային Դաշնակցութեան խիղճը մարմնաւորող այս առաքելային անունով կոչուեցաւ Չաւարեան Ուսանողական Միութիւն: Չաւարեանական պայքարի բովէն անցած են ամբողջ սերունդներ, եւ այսօր ՉՈՍՐ իր հիմնադրութեան 100ամեակի սեմին կու գայ զգեկոչելու այս աշխարհիկ սուրբին մահուան 90ամեակը՝ յատուկ ձեռնարկով մը, որ տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 14 Նոյեմբեր, երեկոյեան ժամը 8:00ին, «Յ. Տէր Մէլքոնեան» քատերարահին մէջ: Այս զգեկոչումը մեկնակէտ պիտի հանդիսանայ միութեան 100ամեակի տօնակատարութեանց ու ձեռնարկներուն:

Ան այդ, Չաւարեանի գաղափարական շունչով փնտրած ՉՈՍՐ անգամ մը եւս կը հաստատէ, թէ գօտեպնդուած անոր հաւատքով՝ պիտի շարունակէ իր հարիւրամեայ երթը ի խնդիր Հայ Դատի մեր տեսլականին՝ ամբողջական Հայաստանի կերտման:

Հ. Յ. Գ. ՉՈՍՐ

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉԱՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ**

(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի)

**Հայկական Նախալրարաններու Ուսուցիչներու Որակաւորման Դասընթացը**

Համագործակցութեամբ՝ Ազգ. Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին

- **ՆՊԱՍԱԿ Ուսուցիչներ օժտել անհրաժեշտ գիտելիքներով. համապատասխան լիբանանեան կրթական նոր համակարգի առաջադրանքներուն:**
- Դասախօսութիւններ. քննարկումներ. գործնական կիրարկումներ եւ խմբակային աշխատանք:
- **Տեսողութիւն**
- 2003 Նոյեմբերէն 2004 Յունիս
- Ամիսը մէկ անգամ Շաբաթ օրերը, ժամը 8:30-էն 1:30
- **Վայր**- Մ. եւ Հ. Արայանեան Ծեմարան. Մրզիտ

**Դասընթացքի ասարտին՝ համապատասխան վկայագիր**

**Մանրամասնութեանց համար հեռաձայնել 04 - 712603, 04 - 712604, 03 - 429685 քիւրու**

**Փոխադրամիջոցը ապահովուած է հետեւեալ վայրերէն.**


- Զաղոյեան կեդրոն, առաւուտեան ժամը 8:00ին
- Մետրոպէան վարժարան, առաւուտեան ժամը 8:00ին:

**ԼՕՒԻ ԸՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

**ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ՆՈՒՆԷ ԵՍԱՅԵԱՆ**


**ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԸ «ՔՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԵԱՆԷ» ՊԱՐԱԽՈՒՄԵՐՈՒՆ. ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԸ ՖԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ԵՐԵՔՇԱԲԹԻ, 18 ՆՈՅԵՄԲԵՐ 2003, ԵՈՒՆԵՍԲՕ-Ի ՄՐԱՀԻՆ ՄԷՉ, ՄԱԿ՝ 10.000Լ.Ո., 20.000 Լ.Ո. ԵՒ 30.000 Լ.Ո.**

**ՏՈՄՍԵՐԸ ԱՊԱՀՈՎԵԼ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԳՐԱԽԱՆՈՒԹԵՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ ՆԱՐԵԿԱՅԻՆ**



# ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ԵՒՐՈՅԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ՝ ԸԱՍԱԶԳԱՅԻՆԻ ՍԱՐՄԵՅԻ ՃԵՄԱՐԱՆԻՆ

Շաբաթ, 8 Նոյեմբեր 2003ի երեկոն անմոռանալի պիտի մնայ Մարսելյի հայուրեան յիշողութեան մէջ: Այդ օրը տեղի ունեցաւ Համազգայինի ճեմարանի նոր շէնքի բացումը:



Ճիշդ ժամը 18:00ին՝ հոծ բազմութեան մը ժամահարութիւններու տարափին տակ Ֆրանսայի Ծերակոյտի փոխ նախագահ եւ Մարսելյի քաղաքապետ Ժան-Քլոտ Կոտէն կտրեց անաղակ անձնաւորութիւնները առաջնորդուեցան դէպի դպրոցի շէնքին մուտքը, ուր Կոտէն վերցնց օրուան հանդիսութեան առնչուող յուշատախտակը ծածկող քողը: Այնուհետեւ ժողովուրդը մտաւ դպրոց եւ անոր ընդարձակ հանդիսարահին մէջ շուրջ մէկ ժամ յարուած ուշադրութեամբ լսեց հիւրերու համակրանքի խօսքերն ու պատգամները: Յարգողաբար խօսքառին Համազգայինի Մարսելյի ճեմարանի խնամակալ յորեան խոնարհութեամբ լսեց Մարտի Գիլիմեան, Հ. Յ. Գ. Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Մուրատ Փափապեան, Մարսելյի ճեմարանի շրջանաւարտներէն՝

Անայիս Տէրտէրեան, Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Մկրտիչ Մկրտիչեան, Փրովանս-Ալպ-Քօթալի Երջանային Խորհուրդի նախագահ Միշել Վոպէլի ներկայացուցիչը, Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան պետական քարտուղար Բընօ Միլլըրիէ, ծերակոյտական եւ Պուշտի-Րոն նահանգի նախարար խորհուրդի նախագահ Ժան-Նոէլ Կերիւնի եւ վերջապէս՝ Ժան-Քլոտ Կոտէն:

Միւս կողմէ, Երկուշաբթի 10 Նոյեմբեր 2003ի առաւօտեան, Համազգայինի ճեմարանի խնամակալութիւնը ստացաւ դպրոցական շէնքի շինութեան հատակապատի եւ Պուշտի-Րոն նահանգապետարան - խոստացած մէկ միլիոն եւրոյի նուիրատուութիւնը:

Յիշեցնենք նաեւ, որ վարժարանի հոշոտակար Համազգայինին տրամադրուած է Մարսելյի քաղաքապետութեան կողմէ, իսկ Ս. Էջմիածնի Մայր Աթոռի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հոշոտակար - խոստացած վայելող ժողովրդային հանգանակութենէն գոյացած է մէկ միլիոն երեք հարիւր հազար եւրոյի հասնող գումար մը. հանգանակութիւնը կը շարունակուի:

## ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՑԻԱԿԱՆ ԶԱԿՈՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՈԼԷՃԻ ՄԷՉ

Հայ աշակերտներուն հետ անմիջական կապ հաստատելու նպատակով, երէկ, Հինգշաբթի, 13 Նոյեմբերին առաւօտեան ժամը 11:30ին, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան այցելեց Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Քոլէճ եւ մտերմիկ հանդիպում մը ունեցաւ աշակերտութեան հետ:

Այս առիթով, աշակերտներուն պատրաստած կոկիկ յայտագիրին բացման խօսք արտասանեց Հայ աշակերտներու գործադիր տնօրէն եւ ուրախութիւն յայտնեց առաջնորդ արքայանիչ ներկայութեամբ եւ նշեց, թէ աշակերտութիւնը նման մթնոլորտի մէջ կ'ոգնուորուի եւ կը գտնուի իր իր:

Այս ներկայացուցեց գեղարուեստական կոկիկ եւ ազգային - հայրենասիրական դրոշմ կրող յայտագիր մը: Դաւար Գիլիկեան ասմունքեց Անդրանիկ Ծառուկեանի «Եկի՛ր Մեզի»-ն, Ռիթա Յովհաննէսեան երգեց «Երազ Իմ Երկիր», որմէ ետք Մուշեղ Իշխանի «Հայ Լեզուն Տունն է Հայրեն» ասմունքով հանդէս եկան Եսթեր Պասաճեան, Ալին Տարտայեան եւ Դաւար Գայայճեան:

Խոսքը մը աշակերտներ երգեցին «Հայ Ժողովուրդ» եւ «Գարունն է Ժպտում» երգերը, Բարսա Թաշճեան ներկայացուց Խաչիկ Դաշտենցի «Հայերէն»ը, իսկ յայտագիրը արտաբերեց Սեւան Մամիկոնեանի կողմէ արտասանուած Ժ. Ս. Յակոբեանի «Այրենաշունչ»ով:

Իր այցելութեան նպատակը պարզաբանելով Գեղամ եպս. Խաչերեան ըսաւ, որ թէն աշակերտութիւնը, անոնց տարած աշխատանքն ու դպրոցական կեանքը միշտ ալ եղած են իր հետաքրքրութիւններուն առարկան, սակայն ինք ուզած է ուղղակի շօնան մէջ մտնել աշակերտութեան հետ եւ անոնց հետ բաժնել իր մտածումները: Հայ լեզու, մշակոյթ եւ պատմութիւնը սորվեցնող հայ դպրոցի անհրաժեշտութեան անդրադառնալով առաջնորդ արքայանիչ ղիտել տուաւ, թէ հայ շունչն ու ոգին շրջան կ'ընեն անոր մէջ եւ օտար վարժարան յաճախող աշակերտները զրկուած են հայութեամբ լիցքաւորուած ըլլալու վագու մը պարտքը:

Իր խօսքի ամառալի առաջնորդ արքայանիչ կոչ ուղղեց հայ լեզուին կառչած մնալու, հայ գիրքը արժեւորելու եւ անոր փոխանցած իմաստութեան, գաղափարներուն եւ շունչին իրազեկ դառնալու:

Հանդիպումին փակման խօսքը արտասանեց քոլէճի տնօրէնը՝ Յակոբ Բագրատունի, որ

ըսաւ, թէ Գեղամ եպս. Խաչերեանի այցելութեան գլխաւոր դրոշմապատճառը այն է, որ ան կը գիտակցի, որ հայ աշակերտը հայ ժողովուրդի յարեանականութեան հաց պատրաստող ցորենն է: Այս այցելութիւնը առիթ մըն է աշակերտութեան մօտ վերաբարձութիւնը հայ լեզուի պաշտամունքին կրկնել, որ արդէն առկայ է բոլորին արտերուն մէջ: Գիտելիքները ամէն տեղէ կ'ընելի եւ ամբարեւ, պետական քննութիւններուն բոլոր վարժարաններուն մէջ կարելի է յարգելի, սակայն ամէն տեղ կարելի է գտնել հայ դպրոցի փոխանցած շունչն ու աւիշը, ղիտել տուաւ Յ. Բագրատունի:

Ոչ մէկ անհատ կրնայ օտար լեզունով աղօթել, հաստատեց Յ. Բագրատունի եւ նշեց, թէ հայը չի կրնար հայերէնէն բացի ուրիշ լեզունով աղօթել, որովհետեւ խորթ կը զգայ եւ կը կարծէ, որ Աստուած զինք չի հասկնար:

Հայ լեզուին եւ հայ զգալու անհրաժեշտութեան անդրադառնալով ան ըսաւ, թէ հայը նոյնիսկ Աստուածն ու Քրիստոսը հայացուցած է, որովհետեւ Մեքսիկոյ Մաշտոցը Աստուծմէ ներշնչուած է, Ս. Էջմիածնի կառուցուած է Քրիստոսի հրամանով եւ ջրհեղեղէն ետք Նոյեան տապար կանգ առած է Արարատ լեռան վրայ եւ հոնկէ վերածնած է մարդկութիւնը:

Յ. Բագրատունի իր խօսքը եզրափակելով ըսաւ, թէ այս բոլորով հայը հպարտ պէտք է զգայ, հայերէն խօսի, հայութեամբ տրոփէ իր սիրտը, որովհետեւ կարելորը խորքն է, իսկ մնացեալ բոլորը շարք ու խաբկանք են:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ «ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ 30ԱՄԵԱԿԻ ԸԱՄԵՐԳ**  
Հովանաւորութեամբ՝  
**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԵՆՔՈՒՆ ԸԱՅՐԱՊԵՏԻՆ**  
Խմբավարութեամբ՝  
**ՀՈԳՇ. Տ. ՊԱՐԹԵՒ ՎՐԴ. ԿԻԼԻԿԻՍԵԱՆԻ**  
Չորեքշաբթի, 19 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 7:30ին, Ազգային Եղիշէ Մանուկեան վարժարանի «Սիրան Մանուկեան» հանդիսարան, Տրպայէ:

**ԱԶԳ. Ս. ԽԱՆԱՍԻՐԵԱՆ ՔՈԼԷՃ.**  
**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**  
Ազգ. Ս. Խանասիրեան քոլէճի ծնողաց յանձնախումբի կազմակերպած փճակահանութեան շահող թիւերն են.  
133-481-399-511-648-1058:  
●Նուերները կարելի է ստանալ դպրոցէն:

السوق المستقبل الذئيب النصر السفير  
ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Իրաքի մէջ դաշնակցից ուժերուն դէմ յարձակումներու սաստկացումը եւ իտալացիներուն սպանութիւնը, Դամասկոսի հակապաշտպանութիւնը ամերիկեան Ծերակոյտի որոշումին եւ պաղեստինեան կառավարութեան դարանին կողմէ կը հանդիսանան 13 Նոյեմբերի լիբանանեան օրաթերթերուն հիմնական լուրերը:

Լստ «Քիֆահ Արապի»-ի, Պրեմըր Սպիտակ Տան մէջ կը քննարկէ Իրաքի ժամանակաւոր նախագահ նշանակելու կարելիութիւնները: Համաշխարհային պատերազմէն ի վեր իտալացիներուն հասած մեծագոյն վնասը տեղի ունեցաւ Նասիրիայի մէջ, ուր 18 իտալացի զինուորներ սպանուեցան:

Կը քննարկէ Ռաֆայի մէջ եւ 3 պաղեստինցիներ կը ձերբակալեն, մինչ Երկու ուրիշներ կը սպանուին:  
«Տիար» գրած է, թէ պաղեստինեան կառավարութիւնը զօրաբար կ'ընդունէ իտալացիներուն հասած մեծագոյն վնասը տեղի ունեցաւ Նասիրիայի մէջ, ուր 18 իտալացի զինուորներ սպանուեցան:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ Հարիւրի քանի մը ժամուան համար Յորդանան կը մեկնի եւ տեսակցութիւն կ'ունենայ, իսկ Սիւրիայի եւ Պարսկաստանի բանաձեւերը կ'ընդունուին:  
«Մուսաբապալ»-ի համաձայն, Ժամայաթ ըսած է, թէ Սիւրիան անմեղ է, իսկ «Մատին»-ը դրամատան հարցը պիտի չծածկենք Պարսկաստանով:  
«Լիուս» նշած է, թէ բանաձեւերու ստորագրութիւնը սկսաւ Ֆրայիլով, իսկ խորհուրդը կը բաժնուի այս հարցով:

«Քիֆահ Արապի»-ի, իսրայէլեան տեղեկագիր մը կը խոստովանի, որ Իսրայէլի իրաւունքները կը բաժնուի այս հարցով:  
«Մուսաբապալ» գրած է, թէ Արաֆաթի իրաւունքները կը նախատեսէ, որ Պուշտայեան Մուրիոյ դէմ պատիժներ սահմանելու առնչուող որոշումը, իսկ Դամասկոս կը յայտարարէ, թէ ամերիկեան որոշումին պատճառը Սուրիոյ զօր:

«Տիար» ղիտել տուած է, թէ Դամասկոս յայտարարեց. «Պատիժներ որոշելը լուծում մը չէ եւ Ամերիկա ինք եւս մեծապէս պիտի ազդուի իր քայլէն»: Ամերիկացի զինուորական պատասխանատու մը ըսած է, թէ Սուրիոյ դէմ պատժաւոր հարուած հասցնելու, գրած է «Քիֆահ Արապի» օրաթերթը:  
«Նահար»-ի համաձայն, Գահիրէ կը նախատեսէ, որ Պուշտայեան Մուրիոյ դէմ պատիժներ սահմանելու առնչուող որոշումը, իսկ Դամասկոս կը յայտարարէ, թէ ամերիկեան որոշումին պատճառը Սուրիոյ զօր:

Լստ «Քիֆահ Արապի»-ի, իսրայէլեան տեղեկագիր մը կը խոստովանի, որ Իսրայէլի իրաւունքները կը բաժնուի այս հարցով:  
«Մուսաբապալ» գրած է, թէ Արաֆաթի իրաւունքները կը նախատեսէ, որ Պուշտայեան Մուրիոյ դէմ պատիժներ սահմանելու առնչուող որոշումը, իսկ Դամասկոս կը յայտարարէ, թէ ամերիկեան որոշումին պատճառը Սուրիոյ զօր:

«Մուսաբապալ» գրած է, թէ Արաֆաթի իրաւունքները կը նախատեսէ, որ Պուշտայեան Մուրիոյ դէմ պատիժներ սահմանելու առնչուող որոշումը, իսկ Դամասկոս կը յայտարարէ, թէ ամերիկեան որոշումին պատճառը Սուրիոյ զօր:

«Մուսաբապալ» գրած է, թէ Արաֆաթի իրաւունքները կը նախատեսէ, որ Պուշտայեան Մուրիոյ դէմ պատիժներ սահմանելու առնչուող որոշումը, իսկ Դամասկոս կը յայտարարէ, թէ ամերիկեան որոշումին պատճառը Սուրիոյ զօր:

«Մուսաբապալ» գրած է, թէ Արաֆաթի իրաւունքները կը նախատեսէ, որ Պուշտայեան Մուրիոյ դէմ պատիժներ սահմանելու առնչուող որոշումը, իսկ Դամասկոս կը յայտարարէ, թէ ամերիկեան որոշումին պատճառը Սուրիոյ զօր:

«Մուսաբապալ» գրած է, թէ Արաֆաթի իրաւունքները կը նախատեսէ, որ Պուշտայեան Մուրիոյ դէմ պատիժներ սահմանելու առնչուող որոշումը, իսկ Դամասկոս կը յայտարարէ, թէ ամերիկեան որոշումին պատճառը Սուրիոյ զօր:

«Մուսաբապալ» գրած է, թէ Արաֆաթի իրաւունքները կը նախատեսէ, որ Պուշտայեան Մուրիոյ դէմ պատիժներ սահմանելու առնչուող որոշումը, իսկ Դամասկոս կը յայտարարէ, թէ ամերիկեան որոշումին պատճառը Սուրիոյ զօր:

**ՄԵՍՐՈՊԵԱՆ, ՆՍՒԿԻՆ, ՍԱՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ**  
**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴԷ. ԺՈՂՈՎ**  
Ուրբաթ, 14 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վարժարանի ժողովարանին մէջ:  
Միութիւն կարիքը ունի ԴԵՐԱՍԱՆՆԵՐՈՒ՝ իր նորաստեղծ թատերախումբին համար:  
Բեմադրիչ՝ **ՍՈՒՐԵՆ ԽՏՐՃԵԱՆ**  
Արձանագրութեան համար դիմել՝ 03/212410 եւ 01/267264 թիւերուն:

**ԸԱՄԱԶԳԱՅԻՆԻ**  
**75 ԱՄԵԱԿԻ**  
**ԸԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**  
**7 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003**



# ԵՐՐՈՊԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ՄԵՂՄ ՈՃՈՎ Կ'ԱՆԴՐԱԴԴԱՌՆԱՅ ԹՈՒԻՐՔԻՈՅ ՀԱՐՑԵՐՈՒՆ

Արդարության եւ ժողովրդավարության երրոպայի Հայկական Դատական Կոմիտեի (ԵԿԿԿ) Հայ Դատի Յանձնախումբը 7 Նոյեմբերին Հաղորդագրությունում տեղեկացուց, թէ ԵԿԿԿ-ն Յանձնաժողովին վերջերս Հրատարակած «Անդամակցության գծով Թուրքիոյ արձանագրած զարգացումներուն սովորական տեղեկագիրը», որ կը վերաբերի Թուրքիոյ ԵԿԿԿ-ն Միութեան անդամակցության եւ այս ծիրին մէջ իր ստանձնած պարտաւորութիւններու գործադրութեան, նշած է մարդկային իրաւունք մարդին մէջ Թուրքիոյ արձանագրած շարք մը խախտումները, սակայն մեղմ ձեւով անդրադարձած է քննադատելի երեւոյթներուն: Տեղեկագիրը, որ կը Հրատարակուի կողմէ եւ հիմք պիտի ծառայէ նման այլ փաստաթուղթի մը պատրաստութեան: Այդ փաստաթուղթին հիման վրայ ԵԿԿԿ-ն խորհրդարանին կողմէ եւ հիմք պիտի տրուէ, թէ Դեկտեմբեր 2004ին Թուրքիոյ Հետ անդամակցության բանակցութիւններ պիտի սկսի, թէ ոչ:

Տեղեկագիրը քաղաքական չափանիշներու բաժնիին մէջ յանձնաժողովը կը Հաստատէ, թէ՛ «Քարեկարգումներուն գործադրութիւնը Հաւասարակ է չ'ընթացում», աւելցնելով, որ յաճախ «գործադիր եւ դատական իշխանութիւնները կը նեղնեն բարեկարգումներուն ծիրը՝ սահմանափակ պայմաններ ստեղծելով Եւ արգելք հանդիսանալով սկզբնական նպատակի իրագործման»: Տեղեկագիրին մէջ կը բացատրուի, թէ Ազգային Անվտանգութեան Խորհուրդին դերը թէ՛ եւ նուազած է, սակայն այս մարմինը տակաւին ներկայացուցչին ներքին քաղաքային մարմիններուն մէջ, ինչպէ՛ս՝ յատուկ դրամական լրատուամիջոցներու բարձրագոյն մարմինին եւ կրթական մարմինին մէջ: Օրինական գետնի վրայ տեղեկագիրը կը նշէ, թէ հակառակ զինուորական ատենաներու դերին նուազեցումին, այս կառուցները տակաւին չեն Համապատասխան եւրոպական չափանիշներուն, մասնաւորաբար՝ ամբաստանեալներու իրաւունքներուն եւ արդար դատաւարութիւնները վարելու մարզին մէջ:

Տեղեկագիրը կ'անդրադառնայ նաեւ այն մեծ խոչընդոտներուն, որոնց դէմ յանդիման կը գտնուին Թուրքիոյ ոչ իսլամ փոքրամասնութիւնները, սակայն չի դատապարտեր Հայ Համայնքին նկատմամբ գործադրուած խտրականութիւնը:

Ինչ կը վերաբերի կրօնի ազատութեան Հարցերուն, տեղեկագիրը կը Հաստատէ, թէ բարեկարգումներուն ազդեցութիւնը կը մնայ սահմանափակ, եւ՝ «ոչ-իսլամ փոքրամասնութիւնները տակաւին լուրջ Հարցեր կը դիմագրանեն, մասնաւորաբար՝ օրէնքին առջեւ հաստատութեան, սեփականութեան իրաւունքի, ներքին կառավարման, ինչպէս նաեւ՝ կղերական դասի պատրաստութեան արգելիքի մասը չ'ընդգրկուի մէջ»: Տեղեկագիրը կը նշէ, թէ կրօնական փոքրամասնութիւններու կառուցները տեւաբար կը գտնուին «գրավման» վտանգին տակ եւ օրինակներ կու տայ տարբեր կրօնական փոքրամասնութիւններէն առանց նշելու Հայկական Համայնքին դէմ առնուած քայլերը:

«Չարմատայի է, որ յանձնաժողովը իր տեղեկագիրին մէջ չ'է ներառած նոյնիսկ մէկը խտրականութեան ան բազմաթիւ օրինակներէն, որուն կ'ենթարկուի Թուրքիոյ ոչ իսլամ մեծագոյն կրօնական փոքրամասնութիւնը՝ «Հայ Առաքելական Համայնքը», ըսած է ԵԿԿԿ-ի Հայ Դատի ներկայացուցիչ Հիլտա Չոպոյեանը՝ անդրադառնալով տեղեկագիրին բովանդակութեան:

Ինչ կը վերաբերի փոքրամասնութիւններու իրաւունքներուն, տեղեկագիրը կը նշէ, թէ հակառակ ՄԱԿի քաղաքային եւ քաղաքական իրաւունքներու ռախտի որդեգրումին, Թուրքիա յառաջացուցած է բարեփոխում մը, որ կը սահմանափակէ իրենց մշակոյթը պահելու,

կրօնը կիրարկելու եւ մարեքի լեզուն գործածելու փոքրամասնութիւններուն իրաւունքները: Յանձնաժողովը դատապարտած է այս բարեփոխումը, որուն համաձայն, վերոյիշեալ իրաւունքները «կը մեկնարանուին եւ կը գործադրուին Թուրքիոյ սահմանադրութեան եւ 1923ի Լոզանի դաշնագրին հիման վրայ»:

Յանձնաժողովը նուազագոյնի իջեցուցած է Հայկական Յեղասպանութեան վերապրողներու յաջողութեան նկատմամբ շարունակաբար գործադրուող հակահայ քաղաքականութիւնը: Տեղեկագիրը կը նշէ, թէ՛ «Փոքրամասնութիւններ իշխանութիւններուն կողմէ ենթարկուած են որոշ խտրականութեան» եւ «գանգատներ ներկայացուած են, որ պետութեան կողմէ պատրաստուած պատմութեան դպրոցական դասագիրքերը պատճառ կը դառնան փոքրամասնութիւններու նկատմամբ թշնամական զգացումներու Հրահրումին»: Սակայն տեղեկագիրը խուսափողական ոճով կ'անդրադառնայ Թուրքիոյ կրթութեան նախարարութեան այն շրջաբերականին, որ դպրոցներէն կը պահանջէ Յեղասպանութեան ուրացման նիւթը դասաւանդել՝ դիտել տալով, թէ՛ դպրոցներէն պահանջուած է Հայերուն, յոյներուն եւ ասորիներուն կապուած խնդրայարոյց պատմական Հարցերուն մասին խորհրդածոյցներ եւ շարադրութեան մրցումներ կազմակերպել»:

«Հայկական Յեղասպանութեան» 20րդ դարու առաջին ցեղասպանութեան գծով խնդրայարոյց ոչ մէկ բան կայ: Այս Հարցը շրջանցելով՝ ԵԿԿԿ-ն կ'անդամակցութեան Յանձնաժողովը նեցուկ կը կանգնի Թուրքիոյ ուրացման քաղաքականութեան», դիտել տալով է Հ. Չոպոյեանը:

Տեղեկագիրը անհրաժեշտ ուշադրութիւն չի դարձնել Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակման Հարցին վրայ եւ պարզապէս կը նշէ, թէ՛ «Հայաստանի հետ Թուրքիոյ սահմանը կը մնայ փակ»: Ապա տեղեկագիրը շուտով կը նշէ, թէ՛ «դիւանագէտներու եւ օտար զբոսաշրջիկներու Համար սահմանի վերաբացման մասին խոսուած է, եւ ատար զուգահեռ, Թուրքիա կրնայ վերատեսուցանել ենթարկել երկկողմանի յարաբերութիւնները Լեւոնտին Ղարաբաղի տագնապին կապելու իր կեցուածքը»: «Աւելին՝ տեղեկագիրին մէջ կ'ըսուի, որ յարաբերութիւններու ծիրին մէջ քաղաքացիական մակարդակի վրայ նախաձեռնութիւններ տեղի ունեցած են, մասնաւորաբար՝ Թուրք-Հայ տնտեսական զարգացման խորհուրդի հովանաւորութեամբ: Երջարակման մասին ակնարկութիւնները անդամակցութեան Համար քաղաքական չափանիշներու բաժնին տեղափոխուած են այլ բաժնի մը մէջ»:

«ԵԿԿԿ-ն Յանձնաժողովը պէտք է գիտակցի, թէ այսպէս կոչուած նախաձեռնութիւնները այլ բան չեն, եթէ ոչ ուշադրութեան շեղումներ: Թուրք-Հայ տնտեսական զարգացման խորհուրդը Թուրքիոյ բանակին ձեռքը քարոզչական գործիք մըն է եւ ոչ մէկ կապ ունի քաղաքացիական մակարդակի վրայ նախաձեռնութիւններու հետ: Ի միջի այլոց, Թուրքիոյ ուրացման քաղաքականութեան դէմ ԵԿԿԿ-ն ոչ կարավարական կազմակերպութիւններու յայն արշար նկատի չ'է առնուած», ըսած է Հ. Չոպոյեանը:

«ԵԿԿԿ-ն մեզի ըսուած էր, որ Յեղասպանութեան ճանաչումը այսուհետեւ անդամակցութեան իրեն քաղաքական չափանիշ նկատի պիտի չ'առնուի: Այսօր, յանձնաժողովը չ'է ներառած Հայաստանի շրջափակումը, եւ թերեւս նոյնիսկ՝ կ'իրաւի ընդհատուի: Մասնաւորաբար, որ ԵԿԿԿ-ն արժեքներ որդեգրելու Թուրքիոյ անկարողութեան դիմաց յանձնաժողովը աստիճանաբար թող կու տայ այդ երկրին, որ իր զինուորական եւ անհանդուրժողական արժեքները պարտադրէ մեր վրայ», եզրափակած է Հ. Չոպոյեանը:

## ԲԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴՈՒՊՈՒՄՆԵՐ

# ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ՝ ՔԱՆԱՏԱՅԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՊՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՒ «ՔԷՆԷՏԻԸՆ ԸԼԼԱՅԸՆՍ»-Ի ԿՈՒՍԱԿՑԱՊԵՏ՝ ՍԹԻՎԸՆ ՀԱՐՓԸՆԻ ԷՆՏ

Քանատայի Հայութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը 5 Նոյեմբերին Օթթուաւայի մէջ տեսակցութիւն մը ունեցաւ Քանատայի պաշտօնական ընդդիմութեան ղեկավար «Քէնէտըն Ըլլայըն» կուսակցութեան ղեկավար Սթիվըն Հարփըրի հետ՝ իր խորհրդարանական գրասենեակին մէջ: Քանատայի Հայութիւնը ներկայացնող պատուիրակութեան մաս կը կազմէին՝ Հ. Յ. Դ. Ազատական կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յակոբ Տէր Խաչատրեան, Ռամկավար Ազատական կուսակցութեան ներկայացուցիչ տղթթ. Յարութիւն Արզումանեան, Քանատայի Ազգային առաջնորդարանի ներկայացուցիչ Արթուր Գապասաբաբեան, Քանատայի Հայոց թեմի առաջնորդութեան ներկայացուցիչ Միքայիլ Գանուճեան եւ Ազատական Քրիստոսը Չարաբճեան: Սթիվըն Հարփըրը գլխավորած «Քէնէտըն Ըլլայըն» կուսակցութեան պատուիրակութիւնը կը բաղկանար դաշնակցային երեսփոխաններ ձէյարն Քէնէտի (Քալիֆորնի), ձէյարն Ռաֆֆի (Կոնտինէնթ), ձիւ Ապպրիլ (Պրիմիթ Բրոնզապա), ինչպէս նաեւ՝ ընդդիմութեան կեդրոնական գրասենեակի պատասխանատուներէն:

Փոխ ծանօթագրման բաժնիէն ետք, այս հանդիպման ընթացքին քննարկուեցան քանատահայութիւնը շահագրգռող Հարցերը: Ընկ. Տէր Խաչատրեանի ներկայացուցած Հայկական գլխավոր երեք Հարցեր, որոնք կը վերաբերին Քանատա-Հայաստան փոխյարաբերութեան, Քանատայի կողմէ Հայկական Յեղասպանութեան պաշտօնական ճանաչման եւ փոքրամասնութիւններու իրաւունքներու:

Առաջին կէտով քննարկուեցան Հայաստանի պետականութեան ամրապնդման ուղղութեամբ տեւող քայլերը ու օժանդակութեան հաւանական մարզերը: Յատուկ ուշադրութեան արժանացաւ Քանատա-Հայաստան փոխյարաբերման ծրագրերը Հաստատելու անհրաժեշտութիւնը:

Քանատայի կողմէ Հայկական Յեղասպանութեան պաշտօնական ճանաչումը արագացնելու հարցով Ս. Հարփըրը յայտնեց իր գործակուցութիւնը: Հակառակ այն իրողութեան, որ իր երեսփոխաններէն մէկը թրքալուստայի երկրներն ունեցած էր անցեալին, Ս. Հարփըրը Հաստատեց իր կուսակցութեան դրական տրամադրութեամբութիւնը: Հայկական պատուիրակութիւնը ընդդիմութեան ղեկավարէն խնդրեց, որ իր կուսակցութիւնը զործան աջակցութիւն ցուցաբերէ Քանատայի խորհրդարանին մէջ ներկայացուելիք բանաձեւի գործադրացին, որ խորհրդարանին մէջ ներկայացուելիք պաշտօնական ճանաչումը պէտք է Քանատայի Մերակային օրինակով պաշտօնական ճանաչումը ամրագրուի խորհրդարանին մէջ եւս: Ս. Հարփըրի փոխանցուեցաւ տարբեր Հարցերու պատասխանատու Սթեֆանի Տէյլի եւ Երեսփոխան ձէյարն Քէնէտի Հայաստան արտաստու արտաստուութիւններուն եւ աշխատանքին կապակցութեամբ:

Քննարկուեցան նաեւ Քանատայի մէջ փոքրամասնութիւններու իրաւունքներուն պաշտպանութեան դատին աջակցութեան եւ ազգային մշակութային հաւաքակազմութեան ներկայացուցիչներու Քանատայի պետական պաշտօնակցութեան մէջ ներառման հրամայականներ:

Ս. Հարփըրը ներկայացուց Հայ գաղութին հետ սերտ կապեր հաստատելու իր պատրաստակամութիւնը:

Երկրէ պատուիրակութիւններն այն համոզում յայտնեցին, որ սիրալիր միջոցառումներ մէջ կայացած այս հանդիպումը կ'առաջնորդէ գործնական լուծումներու եւ համագործակցութեան:

## ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԺՈՒՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԳՊՈՒՄՆԵՐԸ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՉՈՒՄԻ ԳԾՈՎ (\*)

Վերջին շաբաթներուն Հ. Յ. Դ. Քանատայի Հայ Դատի Յանձնախումբը, Քանատայի խորհրդարանին մէջ Հայկական Յեղասպանութեան ճանաչման բանաձեւին գծով պեղելալ աշխատանքներու ձեռնարկեց եւ այդ ծիրին մէջ յաջողական հանդիպումներ ունեցաւ Քանատայի խորհրդարանին գանազան կուսակցութիւններու ներկայացուցիչներուն հետ: Այդ հանդիպումները կը միտին ընդհանուր Համայնականութեան յառաջանելու Յեղասպանութեան բանաձեւին գծով:

Յանձնախումբը իր աշխատանքներուն կ'ըզակէտը դարձուց նաեւ Քանատայի կառավարական դահլիճը, որուն անդամներէն միջկողմ վարական Հարցերու նախարար Սթեֆան Տիոնի հետ 24 Հոկտեմբերին եւ 4 Նոյեմբերին հանդիպումներ տեղի ունեցան Մոնթրէալի եւ Օթթուաւայի մէջ: Նշենք, որ այս ուղղութեամբ իր գնահատելի ներդրումը ունեցած է նաեւ փոխարդամիջոցներու նախարար Տէյվիտ Քոլընէյթ:

Երեսփոխանական մակարդակի վրայ Քանատայի Հայ Դատի Յանձնախումբին անդամներ հանդիպումներ ունեցան խորհրդարանի անդամներ Ալեքս Սքոտտայի, Սթեֆանի Տէյլի, Մատիէ Տալֆոն կիրալի, էլէնի Պաքոֆանոսի եւ Ռէյչոնիտ Շոքոյի հետ:

Յանձնախումբի ատենապետ ընկ. Ժիրայր Պամաճեան անդրադառնալով քաղաքական այս հանդիպումներուն, յայտնեց. «Վերջին շաբաթներուն Քանատայի Հայ Դատի Յանձնախումբին կողմէ ի գործ դրուող ճիշդը նպատակ ունին յաւելեալ թափ տալ Քանատայի խորհրդարանին մէջ Հայկական Յեղասպանութեան ճանաչման բանաձեւին: Անցնող տարեշրջանին Քանատայի Մերակային կողմէ Յեղասպանութիւնը ճանաչելու դրական քայլը յաւելեալ ազդակ մըն է Քանատայի խորհրդարանին ու կառավարութիւնը մղելու, որ հետեւին Փրանսայի օրինակելի քայլին եւ արդարութեան վերահաստատման գծով կատարեն իրենց պարտաւորութիւնը: Այս առնչութեամբ, կ'ուզենք յատուկ շնորհակալութիւն յայտնել խորհրդարանական բոլոր կուսակցութիւններուն եւ յատկապէս նախարար Սթեֆան Տիոնի, որ Քանատայի մէջ Հայկական Յեղասպանութեան ճանաչման սատարող գլխավոր ուժերէն մէկն է»:

(\*) Այս էջով վերստին կը հրատարակենք Հայ Դատի նուիրող էջով լոյս տեսած այս լուրը, որ թերթիք պատճառներով անընթաց լուրջ կ'արձանագրուի:

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՆԿԱՏՄԱՄԸ ՊՈՒՇԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻՆ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐԸ

Միացեալ Նահանգներու Դեմոկրատներու ղեկավարման խորհուրդը վերջերս Հրատարակեց Հաղորդագրութիւն մը, որ կ'անդրադառնայ Հայկական Հարցերու շուրջ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի դիրքորոշումներուն: Հակառակ անոր որ Հաղորդագրութեան պատրաստութիւնը եւ Հրատարակումը կ'իյնան 2004ի նախագահական ընտրութիւններու քարոզարշաւին ծիրին մէջ, այսուհանդերձ բովանդակութեան առումով ան լաւապէս կը ներկայացնէ Պուշի ոչ հայնպատակեցումներուն հրովոյթը:

Հաղորդագրութեան արձարժած հարցերը կու տանք որոշ յայտարարութեամբ:

1) Հայկական Յեղասպանութեան ճանաչման գրաւոր խոստումի դրժում

Անցնող երեք տարիներուն ընթացքին, նախագահ Ճորճ Պուշի Ապրիլ 24ի իր յայտարարութիւններուն մէջ տեւաբար ուրացած է Հայկական Յեղասպանութիւնը ճանաչելու փետրուար 2000ին իր տուած գրաւոր խոստումը: Ընդհակառակը, ան մեղմ բառաւորեք գործածած է՝ խուսափելու Համար Օսմանեան կայսրութեան կողմէ Հայ ժողովուրդի դիտումնաւոր եւ ծրագրուած բնաջնջումը իր ճիշդ սահմանումով (Հայկական Յեղասպանութիւն) նկարագրել:

2) Քոնկրետի Յեղասպանութեան բանաձեւի դեմ դիրքորոշում

Ճորճ Պուշի աշխուժօրէն պայքարած է թէ՛ Մերակայի եւ թէ՛ ներկայացուցիչներու Տան կողմէ Յեղասպանութեան բանաձեւին որդեգրման դէմ: Այս բանաձեւը, որուն մէջ Հայկական Յեղասպանութեան յատուկ կանխարկութիւն կայ, կը յիշատակէ Միացեալ Նահանգներու կողմէ ՄԱԿի Յեղասպանութեան Ուխտի որդեգրման 15ամեակը:

3) Թուրքիոյ կողմէ Հայկական Յեղասպանութեան ուրացման դատապարտումի զլացում

Ճորճ Պուշի վարչակազմը մարտըղովին լուր մնացած է Թուրքիոյ կրթութեան նախարար Հիւսէյն Չէլիքի շրջաբերականին նկատմամբ, որ կը պահանջէր Թուրքիոյ տարածքին բոլոր դպրոցներու աշակերտներուն Հայկական Յեղասպանութեան ուրացման նիւթերը դասաւանդել:

4) Յօլուած 907ի առկախում

Ճորճ Պուշի Բոնկրէսին վրայ ճնշում բանեցուց, որ յօլուած 907ը առկախելու իրաւասութիւն ունենայ: Այս յօլուածը կ'արդիւյ Ազգայնականի նիւթական օժանդակութիւն տրամադրել՝ այնքան ատեն, որ վերջինս կը շարունակէ Հայաստանի եւ Լեւոնտին Ղարաբաղի շրջափակումը:

5) Հայաստանի տրամադրուող օժանդակութեան նուազեցում

Անցնող երեք տարիներուն, Ճորճ Պուշի փորձած է մեծ եւ աննախադէպ չափով նուազեցնել Հայաստանի տրամադրուած ամերիկեան օժանդակութիւնը՝ հակառակ Թուրքիոյ եւ Ազգայնականի կողմէ գործադրուող շրջափակումներուն պատճառած միջառնաւոր տողաներու վնասին: Անոր վարչակարգը փորձած է նաեւ Ազգայնականի զինուորական յաւելեալ օժանդակութիւն տրամադրել:

6) Հայերու՝ իրբեւ ահաբեկիչներ անուանակում

Ճորճ Պուշի վարչակազմի ընդհանուր դատախազը՝ ձոն Ալբերթի, Դեկտեմբեր 2002ին անուանակում կատարեց Հայերուն նկատմամբ, թիւրիմացութեամբ մը Հայաստան զետեղելով ներգաղթի ծառայութեան ահաբեկիչ երկիրներու ցանկին վրայ: Միայն Համատարած բողոքի արշաւէ մը ետք, Հայաստանի անունը ջնջուեցաւ ցանկէն:

7) Հայեւամերիկեան տնտեսական կապերու անտեսում

Ճորճ Պուշի ոչ մէկ իրողական քայլ առած է Մաքսերու Պայմանագրի ընկերային Ապահովութեան համաձայնագրի, Առեւտուրի եւ Ներդրումներու Համակարգի համաձայնագրի եւ այլ երկկողմանի համաձայնագրերու գծով բանակցութիւններուն եւ Միացեալ Նահանգներ-Հայաստան տնտեսական յարաբերութիւններուն ծիրին մէջ:


8) Լեւոնտին Ղարաբաղի ինքնավարութեան իրաւունքի ճակատորոշում

Ճորճ Պուշի զլացում աջակցիլ ապահով սահմաններու մէջ Լեւոնտին Ղարաբաղի ինքնորոշում իրաւունքին, ինչպէս նաեւ Ազգայնական պատասխանատու չնկատեց Լեւոնտին Ղարաբաղի տագնապի լուծման բանակցային գործընթացը միակողմանի ստեղծման:

9) Թուրքիոյ ամերիկեան զեկներու տրամադրման նկատմամբ անտարբեր կեցուածք

Ճորճ Պուշի վարչակարգը գործնապէս հրաժարած է ամերիկեան զէնքերու Թուրքիոյ տրամադրման վերահսկողութեան պատասխանատուութեան: Ընդհակառակն, Սպիտակ Տունը անախտընթաց քայլեր առած է Թուրքիոյ զինուորական օժանդակութեան ընդլայնման ուղղութեամբ: Անոր վարչակազմը նաեւ միջառնաւոր տողարի վարկեր տրամադրած է Թուրքիոյ, հակառակ անոր որ Ազգարա արգիլեց Թուրքիոյ ճամբով Հիւսիսային Իրաքի մէջ ամերիկեան ճակատի մը ստեղծումը:

10) Հարկատուներու գումարներէն աջակցութիւն՝ Հայաստանը շրջանցող Պաքու-Թիֆլիս-ձէյլան քարիւղատարի



# 7րդ Արուեստ

## «ՏՈՔԻՏԵՅՉ» ԿԸ ՅԱՐԳԷ ՎԱՐՈՒԺԱՆ ՍԵԹԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԸ



Վաւերագրական ժապաւէններու միջազգային «Տօքիտէյզ» փառատօնը իր աշխատանքներուն ծիրին մէջ յարգանքի տուրք մատուցեց տակաւին վերջերս մահացած իրանահայ լուսանկարիչ արուեստագէտ Վարուժան Սէթեանի յիշատակին:

Շաբաթ, 8 նոյեմբերի երեկոյեան ժամը 7:00ին, փառատօնը ցուցադրեց «Վարուժան» ժապաւէնը (1999), որուն բեմադրիչն է Միրնա Շպարո: Լիբանանեան արտադրութիւն եղող եւ շուրջ քառորդ ժամ տեւողութիւն ունեցող վաւերագրական այս ժապաւէնին հերոսներն են արուեստագէտ լուսանկարիչն ու անոր ոսպնէակին արգասիքները, որոնք յուշամատենի մը նման կը թերթատուին արուեստագէտին կողմէ:

Իրեն յատուկ սրամբտութեամբ եւ անմիջակա՛նու թեամբ, Վարուժան

Սէթեան կը դիտէ իր լուսանկարները (ժապաւէնին մէջ գլխաւորաբար ներառուած են իրանացի հայ արար նշանաւոր անձնաւորութիւններու լուսանկարները), կը վերլուծէ անոնց ստեղծման առնչուած մանրամասնութիւններ, գրուածքներ, գուարձարի մանրամասնութիւններ, կեդրոնանալու համար իրեն ներշնչուող արդիւնութեամբ, Վարուժան

լի, Շարլ Հելուի, Ժորժ Շահատի, Մուսա Սատրի եւ Միխայիլ Նալիմէի անհատականութիւնները բնորոշող գիծերուն եւ լուսանկարներուն մէջ անոնց գտած արտայայտութիւններուն վրայ:

Ժապաւէնը, դարձեալ Վարուժան Սէթեանի պատուով, սեղմ ակնարկ մը կը նետէ արուեստի ճամբուն վրայ անոր նետած առաջին քայլերուն եւ արուեստագէտը կը յամենայ իր

լուսանկարած առաջին նկարին վրայ: «Լուսանկարներս իմ չունեցած գաւակներս են, կեանքս են, մէկը միւսէն աւելի սիրրիլի է ինձի», կ'ըսէ ան յուզուածով: Երբ լուսանկարները հնուցուած լուսանկարներու թերթատուելու պահին:

Վարուժան Սէթեան երկար կունգ կ'առնէ Ֆէյրուզի լուսանկարներուն վրայ, որոնք կ'արտացոլեն

### ԺԱՊԱԻԷՆՆԵՐ - ԿԱՐԾԻՔ

- «ՄԻՍԹԵ ՌԻՎԵՐ» (Փլանք/Ապրաժ, 2ուր, Ընդերտ)
  - «ՊԱՅԸՐ ՊՈՅՉ» (Ամփիր/Տիւն, Սեթեյի, Սոտեք, Ֆրիուէյ, Զաւիթ, Սքալիւ, Սալիմա, Վալաքսի)
  - «ՎԵՆ ՌԱՅԼՏԸՐ» (Փլանք/Ապրաժ, 2ուր, Ընդերտ)
  - «ՌԵՏ ՍԱՅՐԸՆ» (Փլանք/2ուր, Ապրաժ, Ընդերտ)
  - «ԱՅՏԵՆԹԻՈՒ» (Ամփիր/Տիւն, Եսփաս, Սեթեյի, Ֆրիուէյ, Սքալիւ 2001, Լաւ Սալիմա, Վալաքսի)
  - «ՏԸՐԻԹ ՓՐԻԹԻ ԹԻՆԿՉ» (Փլանք/Ընդերտ, Ապրաժ, 2ուր)
  - «ՖՐԻԹԻ ՖՐԱՅՏԵՅ» (Փլանք/2ուր, Ապրաժ, Ընդերտ)
  - «ՏԸ ՎՈՒՏ ԿԸՐԼ» (Փլանք/Ընդերտ, 2ուր)
  - «ԼԸ ՏԻՎՈՒՍ» (Ամփիր/Սոտեք, Զաւիթ, Ամպաստ)
  - «ՏԸ ՌԵՍԸ» (Ամփիր/Սոտեք, Սքալիւ 2001, Զաւիթ)
  - «ԱՅՏԵՆ ՌՈՒՐԼՏ» (Ամփիր/Տիւն, Եսփաս, Սեթեյի, Սոտեք, Սքալիւ 2001, Վալաքսի)
  - «ՄԵՉՍԹԵ ՍԵՆ» (Ամփիր/Սոտեք)
  - «ՖԱՆՖԱՆ ԼԱ ԹԻԼԻՓ» (Փլանք/2ուր, Ընդերտ, Ապրաժ, Թիփոլի)
  - «ԼԸ ՍԵՐ ՎՈՒՍ» (Ամփիր/Տիւն, Եսփաս, Սոտեք, Վալաքսի)
  - «ՏԱՆԻՆ ՌԻԹԸ ԼԱԿ» (Ամփիր/Եսփաս, Սոֆիլ, Սքալիւ)
  - «Ս. Ռ. Ա. Թ.» (Ամփիր, Ֆրիուէյ, Սքալիւ 2001, Լաւ Սալիմա, Վալաքսի, Զաւիթ)
  - «ԻԹԵԼԻԸ ՃԱՊ» (Ամփիր/Սոտեք, Ֆրիուէյ, Սքալիւ 2001, Լաւ Սալիմա)
  - «ՌԱՅԸ Ե ԿԸՐԼ ՌԻՆԹԵՅ» (Ամփիր/Սոտեք, Ֆրիուէյ, Սքալիւ 2001)
  - «ՍՈՒԻՄԻՆԿ ՓՈՒԼ» (Փլանք/Ընդերտ, Ապրաժ, 2ուր)
  - «ՍԻՆՊԱՍ» (Ամփիր, Սեթեյի, Ֆրիուէյ, Զաւիթ, Սքալիւ 2001, Վալաքսի)
  - «ՌԱՅԸ ՓԸՆԵ Ե ԹԱՅՍ ԻՆ ՍԵՔՍԻՔՕ» (Փլանք/2ուր, Զաւիթ, Ընդերտ)
  - «ՊԱՅԸԼՕ ՍՈՒՆԸՐՉ» (Փլանք/Ապրաժ, 2ուր, Ընդերտ)
  - «ՏԸ ՊՈՒԼԹՐՈՒՖ ՍԱՆԸ» (Փլանք/Ընդերտ, Ապրաժ)
  - «ՊԵՏ ՊՈՅՉ 2» (Ամփիր/Ֆրիուէյ, Ամպաստ, Վալաքսի)
  - «ԹԻՐԸ ԱՅ ՏԸ ՍԱՆ» (Ամփիր/Ամպաստ)
  - «ՏԸ ԼԱՅՖ ԱՅ ՏԵՅՎԻՏ ԿԵՅԼ» (Փլանք/Ընդերտ, 2ուր, Ապրաժ)
- Պ.
- Գերագան
  - Ըտտ լաւ
  - Լաւ
  - Սիջակ
  - Զնք յանձնարարել
  - Զնք դիտած
- ԸԱՐԺԱՊԱՏԵՐԻ ՍՐԱՆՆԵՐՈՒՆ ԶԵՆՈՒՄՆԵՐԻ ԹԻԻԵՐԸ  
 Լաւա. 09/212516 - Սոտեք. 01/616707 - Տիւն. 01/792123 -  
 Սոֆիլ. 01/328806 - Ընդերտ. 01/738439 - Ամպաստ. 09/226010  
 Ֆրիուէյ. 01/485590 - Ապրաժ. 01/292192 - Զաւիթ. 09/912503 - Յնք. 09/221363  
 - Սքալիւ. 08/813901 - Սեթեյի. 04/406706, Թիփոլի. 06/442471:

## Նոր ժապաւէններ

● «Միսիք ռիվըր»  
 Բեմադրիչ՝ Բիլիս Իսպոլուր



Աշխատանքային տպաւորիչ կազմի մը ներկայութիւնը վաշտոյ այս սեւ տրաման ոնիրի մը պատճառով կը վերամիացնէ մանկութեան երեք մտերիմներ, որոնցմէ իւրաքանչիւր իրեն հետ դեպի չափահասութիւն տարած է անջնջելի յուշերու եւ բարոյքներու կոյտ մը: Իրարու հակապատկեր եղող կերպարներու վերածուած երբեմնի ընկերներէն առաջինը՝ Ճիմի (Շոն Փենն), դարձած է տեղական մաֆիայի տարօրինակ գործակալ եւ կ'երդնու ամէն գնով լուծել վրէժը իր սպաննուած զեռտի աղջկան: Երկրորդը՝ Տեյվ (Թիմ Ռոպինզ), կ'ապրի մանկութեան առեւտրով մը յամեցող սարսփներով եւ, անբացատրելի ոնիրի մը հետ

● «Պայքըր պոյզ»  
 Բեմադրիչ՝ Ռեճի Ռոք Պիլմուր

Շարժանիկ մրցումներու առասպելական մանախոյաններուն հերոսութիւնները մեծ պատառ բարձրացնող այս ժապաւէնը հարուստ է հեքիատ մրցումներու պահերով, որոնք կը գրաւեն այլապէս



բացակայ երկխօսութիւններու եւ դիպաշարի այլ գարգացումներու տեղերը: Այս մարգարէին սիրահարներուն հանելի ժամանց մը պարզեւոր այս ժապաւէնը բէւ կը յաջողի պրկել հանդիսատեսները, սակայն գուրկ է լաւ ժապաւէնի մը անհրաժեշտ նուագագոյն տուեալներէն: Անոր մէջ դերեր ստանձնած են Լորրեն Ֆիշպըրը, Տերէք Լիւր, Օրլանտո ձոնգ եւ Լայլա Պոնէ:

● «Վէն ուայքըր. փարթի լիէզոն»  
 Բեմադրիչ՝ Ռուր Պեքըր

Կատակերգական այս ժապաւէնը հանդէս կը բերէ բազմաթիւ տարիներ բարձրագոյն ուսման նոյն կարգերուն մէջ յամեցող ուսանողի մը կերպարը՝ Վէն Ռայքըր, որ նշանաւոր է խրախնայներ կազմակերպելու իր ձիրքով: Սակայն երբ հերոսին հայր կը մեթէ հոգալ անոր ուսման անվերջանալի ծախսերը, ան կը ստիպուի դառնալ արհեստավար խրախնայ կազմակերպող մը: Անոր այս արհեստը առիթ պիտի տայ նոր արկածախնդրութիւններու:

Չուարնալի տեսարաններով հարուստ այս ժապաւէնը բէւ գուրկ է լաւակնշաղկապ նորութիւններ:



առնչութիւն ունեցած ըլլալու պատճառով կը նկատուի գլխաւոր կասկածելի, իսկ երրորդը՝ Շոն (Քեւրն Պէյքըր), կը ներկայանայ իբրեւ ոնիրին ծախսերը հետախուզող գաղտնի ոստիկանը:

Արդարութիւնը հետապնդելու, մոռնալու, ներելու եւ արիւնը արիւնով մարբելու տրամաբանութեան նիւթերը արծարծող «Միսիք ռիվըր» ունի կլանիչ դիպաշար, որուն մէջ սակայն կան որոշ չափով տկար կէտեր եւ անլոյծ մնացած հանգոյցներ: Յատկապէս յիշարժան է գլխաւոր հերոսներէն Ճիմիին դերով հանդէս եկող Շոն Փեննի գեղեցիկ խաղարկութիւնը, որուն հետ ուժգնութեան իմաստով հաւասարակշռութիւն կը յառաջացնէ դերասանուհի Մարիա Կեյ Հարտընի ներկայութիւնը: Ժապաւէնին մէջ երկրորդական դերերով հանդէս եկած են Գալի Լորրեն Ֆիշպըրը եւ Լորա Լիքնի:



Գեր, սակայն օժտուած է դերասանական խոստումնալից կազմով մը (Ռայան Ռեյնոլտս, Թարա Ռեյնոլտս, Քալ Փենն եւ ուրիշներ):

## ԱՐՏԱԻԱԶԴ ՓԵԼԷՇԵԱՆԻ ԺԱՊԱԻԷՆՆԵՐԸ՝ ՇԱՐԺՈՒՆ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ԵՐԿԱՄԵԱՅ ՓԱՌԱՏՕՆԻՆ

Տեսարկիւր եւ գեղարուեստական ժապաւէններու նուիրուած եւրոպական կարեւորագոյն փառատօններէն մէկուն՝ Շարժան Սէթեանի ընտանիքը, «Մետիսի» թատերասրահին մէջ տեղի ունեցած մեծարանքի հանդիսութիւն մը: Խօսք առին «Տօքիտէյզ» փառատօնի տնօրէն Մուսա Շահատի անհատական լուսանկարիչներու սենտիքայի նախագահ ժամայ Սալիմի, որոնք հակիրճ կերպով արժեւորեցին Վարուժան Սէթեանի գործն ու իրանահայ լուսանկարչական արուեստի մէջ անոր ունեցած անուրանալի ներդրումը: Յուշահանդէսի աւարտին արուեստագէտին ընտանիքին յանձնուեցաւ փառատօնին յատուկ յուշագիրը:

### ԿՈՒՉՈՒԻ

Olympic stores հաստատութիւնը իր Պուրժ Ըամուտի սմանաձիւղի համար կարիք ունի ծախող օրիորդներու: Դիմել հաստատութեան, Պուրժ Ըամուտի քաղաքապետարանի դիմաց: Ըեռ. 01-256178:

## ՎՐԱՅԱԿԱՆ ԺԱՊԱԻԷՆ ԼԵՌԵԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳԵԱՊԻՆ ՄԱՍԻՆ

«Արմէնփիլմ» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ Նոյեմբերի սկիզբը Լեռնային Ղարաբաղ այցելած են արխագ եւ վրացի լրագրողներ, որոնք կը պատրաստեն շրջանին տաղնապին մասին վաւերագրական ժապաւէն մը: Անոնք իրենց աշխատանքներուն ծիրին մէջ նկարահանած են շրջանը:

Վրացի լրագրողներու այս այցելութեան ընթացքին տեղի ունեցած է նաեւ անոնց կողմէ պատրաստուած «Խաղաղութեան յոյսով» ժապաւէնին ցուցադրութիւնը: Այս գործը կը վաւերագրէ Արխագիոյ գլխաւորաբար վրացիներով բնակեցուած Գալիի շրջանին բնակիչներուն ծանր իրավիճակը:

Լեռնային Ղարաբաղի տաղնապին առնչուած անոնց ժապաւէնը պիտի հիմնուի տաղնապի միջոցառումներով ժապաւէնը տեղի պիտի ունենայ այս պարունակին մէջ:

Պատրաստեց՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԸԱՄԱԶԳԱՅԻՆԻ  
 75ԱՄԵԱԿԻ  
 ԸԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ  
 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003







ՔՈՐԵՅ - ՇԱՐՈՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

### ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՆԻՍԱԸ

Պաղեստինեան կառավարութիւնը իր առաջին նիստը գումարեց երէկ, մինչ լուրեր շրջան կ'ընէին վարչապետ Ահմէտ Քորէյի եւ իւրայեւացի պաշտօնակից Արիէլ Շարոնի միջեւ հանդիպումի մը հաւանականութեան մասին:

Քորէյ, որ Չորեքշաբթի օր ապահոված էր խորհրդարանին վստահութեան քուէն, երէկ նախագահեց կառավարութեան առաջին նիստին, որ տեղի ունեցաւ Ռամալլայի մէջ: Առաջին նիստին օրակարգի գլխաւոր հարցը իւրայեւացի պաշտօնակիցներու հետ բանակցութիւններու վերակարգումն էր: Բանակցութիւնները, որոնք տեղի կ'ունենային իւրայեւացի պաշտօնատարներու հետ, առկախուած էին երէք ամիս առաջ:

Նիստի աւարտին, Քորէյ ըսաւ որ Շարոնի հետ հանդիպումը արդիւնաւետ պէտք է ըլլայ, այլապէս իմաստ պիտի չունենայ հանդիպումը: Իւրայեւացի վարչապետին հետ տեսակցութեան արդիւնքները պէտք է առնչուին պաղեստինցիներուն կեանքը դժուարացնող ճնշումներուն: Քորէյ ըսաւ նաեւ, որ թուական չէ ճշդուած Շարոնի հետ հանդիպումին մասին: Իւրայեւացի աղբիւրներ սակայն ըսին, որ տեսակցութիւնը կրնայ տեղի ունենալ քանի մը օրէն: Արտաքին գործոց նախարար Սիլվան Շալոմ ըսաւ, որ յառաջիկայ տարւոյ օրերուն հանդիպումը տեղի պիտի ունենայ Քորէյի եւ Շարոնի միջեւ:

Պաղեստինցի վարչապետը դիտել տուաւ նաեւ, որ հանդիպումին ընթացքին պաղեստինեան ճակատը պիտի ընէ իր ըսելիքները, ինչպէս նաեւ մտիկ պիտի ընէ իւրայեւացի տեսակէտները: Ան աւելցուց, որ բարարար չեն Շարոնի խոստումները պատմամիջոցները մէկմացնելու մասին, որովհետեւ այդ խոստումներուն գործադրութիւնն է կարեւորը: Քորէյ ըսաւ, որ արդիւնքներուն կարգին պէտք է ըլլայ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի ղեկավարութեամբ կազմակերպուած ծրագրին մասին:

Շալոմ իր կարգին ըսաւ, որ Քորէյ պէտք է փաստէ, որ ինք մանկկալիք չէ Արաֆատի: Ան աւելցուց, որ Քորէյ պէտք է ներկայացնէ ծրագիր մը անդամահատելու համար ստեղծուած կազմակերպութիւնները:

Միւս կողմէ, իւրայեւացի ուժեր երէկ առաւօտեան կանուխ ժամերուն մտան թուրքարմ քաղաքն ու անոր կից գողթակայար, յայտնեցին պաղեստինեան ապահովութեան աղբիւրներ: Գողթակայանին մէջ բախումներ արձանագրուած են: Իւրայեւացի աղբիւրներ հաստատեցին լուրը, դիտել տալով սակայն որ գործողութեան տարողութիւնը սահմանափակ էր:

ԻՐԱԸ

### ՊՐԵՍԸՐ ՊԱՂՏԱՏ ԿԵՐԱԴԱՐՁԱՒ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԵՆ

Իրաքի մէջ ամերիկեան քաղաքային իշխանութեան ղեկավար Փօլ Պրեմըր երէկ վերադարձաւ Ուաշինգթոն, ուր նախագահ Ճորձ Պուշ Իրէն թելադրած է մշակել այնպիսի ծրագիր մը, որուն թիրախը ըլլայ արագացնել իշխանութեան փոխանցումը իրաքցիներուն:

Պուշ ըսաւ, որ Պրեմըրէն պահանջած է իրաքցիները աւելի մասնակից դարձնել իշխանութեան: Ան աւելցուց, որ Պրեմըր այս գծով հանդիպումը պիտի ունենայ Իրաքի իշխող խորհուրդին հետ, խորհրդակցելու համար որդեգրուելիք միջոցառումներուն մասին:

Պրեմըր Ուաշինգթոնի մէջ հանդիպումներ ունեցած էր բարձրատիճան պաշտօնատարներուն, ինչպէս նաեւ Պուշի հետ: Պրեմըր հաստատեց, որ նախագահը մասնաւոր թելադրանքներ ու յանձնարարութիւններ տուած է իրեն իշխանութեան փոխանցումը արագացնելու իմաստով: Պրեմըր սակայն մանրամասնութիւններ չտուաւ առաջարկուած ծրագրին մասին:

Ամերիկացի ներկայացուցիչը Իրաք կը վերադառնար իտալական ուժերի թիրախ դարձնուած յարձակումէ մը մէկ օր ետք: Պայթումին սպաննուած էին 18 իտալացիներ եւ



ինը իրաքցիներ: Իտալիոյ պաշտպանութեան նախարար Անթոնիօ Մարթինօ երէկ Իրաք ժամանեց այցելելու համար իտալացի պիտուորներուն, որոնք տակաւին չէին սթափած Չորեքշաբթի օրուան աղետին ցնցումէն: Մարթինօ խօսելով պայթումին մէջ վայրի զիմաց, ըսաւ որ Նասիրիայի գործողութիւնը կատարուած է «նոյն ձեռքով», որ ծրագրած էր 11 Սեպտեմբերի գործողութիւնները: Իտալացի նախարարը շեշտեց սակայն որ Նասիրիայի յարձակումները պատճառ պիտի չդառնան, որ իտալիա Իրաքէն հեռացնէ ուժերը: Ան աւելցուց, որ ապահովութեան աւելի խիստ միջոցառումներ պիտի որդեգրուին՝ կանխարգիլելու համար նման յարձակումներու կրկնութիւնը:

Մարթինօ այցելեց նաեւ իտալացի 21 վի-

րաւորներուն, որոնք Նասիրիայի-պիտուորական հիւանդանոցը փոխադրուած էին: Մինչ այդ, երէկ վիւրաւորուեցան ամերիկացի երէք պիտուորներ Քերքուքի եւ Տալլուժայի մէջ գործողութիւններու ընթացքին: Երկուքը վիւրաւորուեցան Քերքուքի մէջ, սակայն մը պայթումին պատճառով, իսկ երրորդը՝ Տալլուժայի մէջ՝ նոյնպէս սակայն մը պատճառով:

Ամերիկեան ուժերը իրենց կարգին երէկ հիւսիսային շրջաններուն մէջ ձեռքարկուեցին 11 իրաքցիներ, որոնց կարգին է նախկին վարչակարգէն բարձրատիճան պաշտօնատար մը: Ձերբակալութիւններ յաջորդած են ամերիկեան ուժերուն պատկանող ուղղաթիռի մը վրայ բացուած կրակի միջադէպի մը: Ուղղաթիռը փամփուռներու թիրախ դարձած էր առաւօտեան:

### ՉԵՉԵՆԻՈՅ ԸԱՐՑՈՎ

## ՌՈԹ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ՓՈԻԹԻՆԸ

Գերմանիոյ կառավարութեան մարդկային իրաւանց մարպի մասնագէտը՝ Բյօտիս Ռոթ, երէկ քննարկուած է նախագահ Վլադիմիր Փութինը Չեչենիոյ մէջ տեղի ունեցած մարդկային իրաւանց բռնաբարումներուն եւ քարիւղի «Եռքս» ընկերութեան նախկին տնօրէնին արգելափակումին համար:

«Ռուսիա այլեւս օրէնքի պետութիւն մը չէ», ըսած է Ռոթ, որ իշխող կառավարական ընկերակցութեան կրտսեր անդամ Կանաչ կուսակցութեան նախկին ղեկավարն է:

Ան խորհրդարանին մէջ դատապարտած է Փութինի «առաջնորդուած ժողովրդավարութիւնը», որովհետեւ անիկա «բռնատիրական պետութեան մը արդի մէկ տարբերակն է», շեշտելով, որ Չեչենիոյ մէջ անոր քաղաքականութիւնը պարզապէս սխալ է:

Ընդդիմադիր պահանջողական երեսփոխանները նոյնպէս գայթակղութիւն արտայայտած են եւ կոչուողա՞ծ վարչապետ Կերիարտ Շրէտըրի, որ «յստակ բռնեղով» դատապարտէ մարդկային իրաւանց բռնաբարումները:

Շրէտըրը պաշտպանելով իշխող Ընկերավար ժողովրդավար կուսակցութեան փոխ ղեկավար Կերնըրըրը

յայտնած է, թէ կառավարութիւնը հետպիտեւ անիկա «բռնատիրական պետութեան մը արդի մէկ տարբերակն է», շեշտելով, որ Չեչենիոյ մէջ անոր քաղաքականութիւնը պարզապէս սխալ է:

Ընդդիմադիր պահանջողական երեսփոխանները նոյնպէս գայթակղութիւն արտայայտած են եւ կոչուողա՞ծ վարչապետ Կերիարտ Շրէտըրի, որ «յստակ բռնեղով» դատապարտէ մարդկային իրաւանց բռնաբարումները:

Շրէտըրը պաշտպանելով իշխող Ընկերավար ժողովրդավար կուսակցութեան փոխ ղեկավար Կերնըրըրը

տանական տեսան մը երէկ մերժած է չեչէն բարձրատիճան բանագնաց Ահմէտ Չաքաւըր յանձնելու Ռուսիոյ առաջարկին ընդառաջել, ըսելով, թէ անիկա կրնայ չարարանքներու ենթարկուիլ:

Դատաւորը՝ Թիմըթի Ուրըքմէն, ըսած է, թէ անարդար պիտի ըլլայ Չաքաւըր Դաշնակցային Ռուսիոյ յանձնել:

Ռուսիա կ'ամբաստանէ Չաքաւըր (44 տարեկան), որ չեչէն ըմբոստ նախագահ Ասլան Մասխատովի պատուիրակն է, ոճրային 13 ամբաստանութիւններով՝ 1995էն 2000 Չեչենիոյ մէջ

ստեղծուած է չեչէն բարձրատիճան բանագնաց Ահմէտ Չաքաւըր յանձնելու Ռուսիոյ առաջարկին ընդառաջել, ըսելով, թէ անիկա կրնայ չարարանքներու ենթարկուիլ:

Դատաւորը՝ Թիմըթի Ուրըքմէն, ըսած է, թէ անարդար պիտի ըլլայ Չաքաւըր Դաշնակցային Ռուսիոյ յանձնել:

Ռուսիա կ'ամբաստանէ Չաքաւըր (44 տարեկան), որ չեչէն ըմբոստ նախագահ Ասլան Մասխատովի պատուիրակն է, ոճրային 13 ամբաստանութիւններով՝ 1995էն 2000 Չեչենիոյ մէջ

**ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԵՍ**  
Կազմակերպութեամբ՝  
**Verginie Productions** Ի  
Ելոյթ կ'ունենայ սիրուած երգիչ՝  
**ՓՕԼ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ**  
Ընկերակցութեամբ՝  
**ԽԱՉԻԿ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱՌՈՒՄԻՆ**  
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 15 Նոյեմբեր 2003ին  
երեկոյեան ժամը 9:30էն սկսեալ, Century Park Hotelի մէջ, Kaslik  
Տոմարը ստանալ- Սթիւտիօ ԽԱՉԻԿ ՄԱԼԽԱՍԵԱՆ հեռ. 03/261061,  
Տիւրքերը ԵՄԿ, եւ PAMCO CELL Սանթրը Պլանքո:

Միւս կողմէ, բրի-

### ՄԱՐԴԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՑ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՏԵԱՆԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԹՈՒՐԲԻԱՆ

ՄԹՐԱՉՊՈՒՐԿ, 13 (ԱՅՓ).- Մարդկային իրաւանց Եւրոպական Ատեանը Հինգշաբթի օր դատապարտած է Թուրքիան՝ փաստաբաններ տանջանքներու ենթարկած ըլլալու համար, անոնց հետ «անմարդկային ու վարկաբեկիչ» ձեռք վարուելով, անոնց պարտադրելու, որ խոստովանին, թէ քիրտ անջատողականներու օժանդակած են:

16 փաստաբաններու խմբակ մը գանգատներ կայացուցած է ատեանին՝ 1993ին իրենց ձերբակալումին համար, ոճրային ենթադրեալ գործունէութեան յանցանքով:

Անոնք մահուան սպառնալիքներ ստացած են իրենց 7էն 25 օր տեւողութեամբ արգելափակումին ընթացքին, ինչպէս նաեւ վարկաբեկուած են:

Ատեանը հրահանգած է Թուրքիոյ փաստաբաններուն 1210էն 36 հազար եւրօ վնասուց հատուցում վճարել:

Փաստաբանները յայտնած են, որ իրենց ձերբակալութեան իսկական պատճառը իրենց մարդկային իրաւանց մարպի մէջ գործունէութիւնն է, ինչպէս նաեւ այն պարագան, որ ինքնքներ կայացուցած են մարդիկ, որոնք Թուրքիոյ պետական ապահովութեան ատեաններուն մէջ դատուած են:

### ՄԱԿ - ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԲԱՆԱՎԵՃ՝ ԻՐԱՆԻ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԻ ՀԱՐՑՈՎ

ՄԱԿի կորիկային ուժանիւթի միջազգային գործակալութիւնը երէկ մերժած է ամերիկեան այն ամբաստանութիւնները, թէ Իրանի մասին բանալի տեղեկագիր մը սխալ եզրակացութեան յանգած է, ըսելով, թէ որեւէ փաստ չկայ, որ իսլամական հանրապետութիւնը կը փորձէ կորիկային կէսերը պատրաստել:

Իրան երէկ պաշտօնացուցած է, թէ «միջազգային տագնապ մը» ծայր կրնայ տալ եթէ ՄԱԿի գործակալութիւնը հարցը Ապահովութեան խորհուրդին փոխանցէ:

Գործակալութեան բանբերը՝ Մարք Կվոյտիքը, շեշտած է, որ տեղեկագիրին «պարզապէս կը կանգնի»: Ան կը խօսէր 29 էջոց այն փաստաթուղթին մասին, զոր գործակալութեան ընդհանուր տնօրէն Մոհամէտ Պարստի յանձնած է երկուշաբթի օր կառավարիչներու մարմինին: Կվոյտիքը մերժած է յաւելեալ բացատրութիւններ տալ, յայտնելով, որ տեղեկագիրը «գաղտնի փաստաթուղթ մըն է եւ պիտի քննարկուի յառաջիկայ շաբաթ»:

Տեղեկագիրը Իրանը կ'ամբաստանէ անցնող 20 տարիներուն կորիկային գաղտնի գործունէութիւն ունեցած ըլլալու յանցանքով, սակայն անիկա կ'ըսէ որ տակաւին փաստ չկայ, որ Թեհրան կը փորձէ կորիկային ռուբ մը պատրաստել:

Տեղեկագիրը արդիւնք է ՄԱԿի գործակալութեան քննիչներուն 8 ամսուան աշխատանքներուն: Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան միջազգային ապահովութեան բաժանմունքին պատասխանատու ձոն Պոլըրն Ուաշինգթոնի մէջ յայտնած է, որ գործակալութեան եզրակացութիւնները հաստատուած տուեալներու ղեկ են: Սակայն ան Պարստիին չէ քննադատած:

**ԱՅՀԻԼ AFHIL**  
**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**  
AT HOME  
• Wheelchair  
• Walker  
• Electric Bed  
• Manual Bed  
• Water Mattress  
• Cans  
• Sticks  
• Serum Tripod  
• Walking Frame  
RENT AND SALE  
HOME MEDICAL EQUIPMENT SERVICES  
• Over Bed Table  
• All Kinds Of Oxygen  
We Also Provide  
• Laboratory service,  
• Physiotherapist  
• Nurses Aids  
• P.T.S. (AMBULANCE)  
ՅՈՒՑԱՍՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ  
ԳՐԱՍԵՆԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ  
ՇԵՆ. (02) 242556/7  
NO MATTER WHAT YOU NEED...  
... OR WHERE YOU NEED.  
ازتاک : فاكس: ٢٥٨٥٢٩ ص.ب: ٨٠٨٦ بيج حكاوود  
٢٤١٢٧٤ - ٢٦.١١٥ - ٢٥٨٥٢٦ : هاتف